ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N01

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ <<*ՀՀ ՏՄ-ՇՀԾՁԲ-16/1-1*>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Իջևան <<21>> դեկտեմբերի 2015 թ.

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի վարիչ Դ. Փաշինյան

Անդամներ՝

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի առաջին կարգի մասնագետ Հ. Քլոյան

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ Ա. Գևորգյան

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչություն գլխավոր մասնագետ Ս. Չիբուխչյան

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ -տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Լ. Պետրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ Ա.Խաչատրյան:

<<ՀՀ ՏՄ-ՇՀԾՁԲ-16/1-1>> ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման, գնահատման արդյունքների հաստատման մասին

1. Գնման ընթացակարգը կազմակերպվել է ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգ>>-ի 28-րդ կետի համաձայն, պայմանագիրը կնքվելու է պայմանով, որ դրա շրջանակներում գնումը կատարվելու է անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

2.Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են www.armeps.am էլեկտրոնային մրցութային համակարգով ս.թ. դեկտեմբերի 21-ին ժամը 14 : 00 – ին:

3. Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

N	Մասնակցի անվանումը	Գրանցման վայր,ՀՎՀՀ	Չափաբաժինը, որի համար հայտ է ներկայացրել
1.	<<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ	ՀՀ ,ք.Երևան,Արգիշտիի փող. 4/1, ՀՎՀՀ 01551651, info@mts.am, 010-56-92-22	1

4. **Տվյալներ՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտերը կազմելու և ներկայացնելու մասին.**

<<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

5. Տվյալներ՝ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

<<ՀՀ ՍՄ-ՇՀԾՁԲ-16/1-1>> ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով <<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ-ն ներկայացրել է՝ գնային առաջարկ, հայտարարություն մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանության և գրանցման պահից հետո դրանց առկայության, ինչպես նաև հրավերով սահմանված հայտարարություններ՝ տեխնիկական միջոցների, ֆինանսական միջոցների, աշխատանքային ռեսուրսների և մասնագիտական փորձառության առկայության վերաբերյալ: <<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ-ի կողմից մրցույթին ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գները՝

<<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ ՀՀ դրամ

Չափա-բաժին	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	Ինտերնետային կապի տրամադրման ծառայություններ	1 540 000	210 000	350 000	2 100 000 /Երկու միլիոն մեկ հարյուր հազար/

7. Այլ անհրաժեշտ տեղեկություններ

Հայտի գնահատումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային մրցութային համակարգով, գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

ՀՀ Տավուշի մարզպետարանի կարիքների համար կազմակերպված <<ՀՀ ՍՄ-ՇՀԾՁԲ-16/1-1>> ծածկագրով մրցույթին ներկայացված հայտերի գնահատման արդյունքների հիման վրա գնահատող հանձնաժողովն ընդունեց հետևյալ որոշումները.

1. *<<ՀՀ ՍՄ-ՇՀԾՁԲ-16/1-1>>* ծածկագրով մրցույթին առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ - ին՝ որպես հրավերի պահանջներին բավարարող նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:
2. <<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ – ին ներկայացնել ծանուցում՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային ձևով ՀՀ Տավուշի մարզպետարան ներկայացնել հայտով սահմանված որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:
3. *<<ՀՀ ՍՄ-ՇՀԾՁԲ-16/1-1>>* ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման նիստ գումարել ոչ ուշ, քան մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերը և ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամներ

Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Փաշինյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գևորգյան

Հ. Քլոյան

Ս. Չիբուխչյան

Լ. Պետրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Խաչատրյան